

ՅՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

(Պատկեր իրական կեանքից)

Առանձնասենեալի դուռը բացուեց և ներս մտնող աղախինը յայտնեց ճարտարապետի գալուստը:

—Խնդրիր —, ձայնեց Մելքոն աղան և վերկենալով տեղից շարժուեց գէպի դուռը:

—Ա-ա, բարև մեզ Մելքոն աղալ —, քիչ յետոյ ներս մտնելով ձայնեց ճարտարապետը և ձեռի կոլորած թուղթը գրեց սեղանի վրայ:

Մելքոն աղան ինքն սկսեց լետ ծալել թուղթը և նայել գծագրած լատակագծին:

—Գեղարուեստի վայելչութիւնը նրա արտայալառութեան մէջն է կայանում. իսկ արտայալտութիւնը անցնում է մեզ գլխաւորապէս մեր տեսողութեան ու լսողութեան միջոցով. եթէ որևէ բան խանգարում է նրա կանոնաւոր և ներդաշնակ արտայալտութիւնը՝ գեղարուեստը խանգարում է, կորցնում է իւր իլիւզիան: Օրինակի համար, վերցնենք մի վայելչահասակ կին. երբ տեսնում ես հեռուից՝ գրաւետում ես նրա վայելչութեամբ. մօտենում ես, նայում ես դէմքին. և ինչ վատ ես զգում, երբ նրա փարթամ հասակին համապատասխան դէմք չես տեսնում. ամբողջ տպաւորութիւնդ յեղաշրջւում է և ինչ որ անհաճոյ տրամադրութիւն գալիս վրադ:

—Բոլորովին ճիշտ է, պարօն ճարտարապետ, բոլորովին —, հառաջ արձակելով նրա ասածին արձագանք տուեց Մելքոն աղան:

—Նոյնը և տունն է. դա ևս մի գեղարուեստական

քան է. եթէ չկառուցանես նրան համաշափ և ամեն մի մասը իր տեղում, նա կորցնում է իր ամբողջ գեղեցկութիւնը,

Մելքոն աղան խիստ լաւ հասկանում էր ճարտարապետի ասածի միտքը և ըմբռնում. և այդ մտքից աւելի էր յուզելում, երբ մտաբերում էր, որ խարազ Արէլը չի ուզում իւր փոքրիկ տան տեղը ծախել: Նեղութիւնը մի նոր ալիքով գալիս էր վրան և նրա տրամադրութիւնն աւելի վատացնում:

—Այդ բոլորը լաւ ես ասում, պարոն ճարտարապետ. քայց դրանով գործը չգրստուեցաւ. դու դրա հնարը գետես, հնարն ասա:

—Հնարը, հարցնում ես:

—Այս. հնարը:

—Հնարը այդ մի կտոր հողն առնելն է. ուրիշ հընաը չկալ:

—Իսկ եթէ չուզենայ ծախել, —պապիրոսի մոխիրը մատի ծալրով թափելով խօսեց Մելքոն աղան:

—Նատ փող առաջարկիր, գրաւթիր.

—Իսկ եթէ այդ էլ անեմ, չգրաւի, չծախի:

—Այն ժամանակ այդ տեղ տուն շինելու մտքից պիտի հրաժարուիս:

—Ի՞նչ, հրաժարուիմ, — համտրեա բարկացած կանչեց Մելքոն աղան:

—Այսո, հրաժարուիս. ալդպիսի դէպքում աւելի լաւ է չշինելը, քան շինելը:

—Պարոն ճարտարապետ, գիտէք դուք ինչ էք ասում, —զայրութավ առաջ տարաւ, Մելքոն աղան, —ի՞նչպէս կարող եմ ես տուն չշինել. ի՞նչպէս կարող եմ ես առանց տուն մնալ. և այս տուն է, որ ես բնակւում եմ. ոչ կանոնաւոր մուտք ունի, ոչ բաւականին սենեակներ. մի պատուաւոր մարդ է գալիս՝ փողոցի վրայ պագեզդ չկալ, որ ընդունեմ, հրաւէր պէտք է սարքեմ՝ սեղանատունս 50 մարդուց աւելի չի տանում. նոր կահ-

կարասի պէտք է առնեմ՝ չգիտեմ որտեղ դնեմ. մի խօսքով մնացել եմ շուարած. ինքներդ ասէք, ինչպէս չըն-

նեմ:

Մելքոն աղալի ալդ ասածի տոնը ալնքան ստիպողական էր, որ նա ինքը ուրիշ կերպ չհասկանալով՝ կասես պահանջում էր, որ ուրիշներն ես ուրիշ կերպ չհասկանալին:

— Ալդ ամենը խիստ լաւ ես ասոմ, բայց և այնպէս ալդ պլանով տուն շինելը միտք չունի: Նայեցէք ինդրեմ մի ըոպէ այստեղ, — յատակագիծը բաց անելով մատով սկըսեց ցալց տալ ճարտարապետը. — այս կողմը փողոց է, միւս կողմը նոյնպէս փողոց, որ իրար կարում են. իսկ ալդ իրար կտրած տեղի անկիւնը ձերը չէ, որը հիանտի ճակատ կլինի. ասել է տունդ առանց ճակատի է լինելու:

Մելքոն աղան ալդ լսելով աւելի և աւելի լուզուեց, ծխաքարշը հուպ տալով ատամների մէջ՝ չաղիկ մատը դրեց յատակագիծի այն տեղին, որ իրեն չէր պատկանում, ուզելով կասես պոկելու հանելու թղթի երեսից ալդ կտորը, որ խանգարում էր իր շինութեան գործը:

— Իսկ եթէ երկու փողոցի երեսին երկու ճակատ անես՝ դա ալնքան անճոռնի կը լինի, ինչպէս անճոռնի է դէմքը առանց քթի:

— «Թիւկւ», աւելի զայրացած շշնչաց Մելքոն աղան, և լիշեց դէմքը թափած քթով: Նրա համար ալդ ըոպէ դրանից աւելի զգուելի բան չկար. — ուրեմն:

— Ուրեմն այն, որ կամ չպիտի շինես, կամ եթէ ուղում ես անսլատնառ շինել՝ ալդ մի կտոր տեղը աժան թէ թանգ պիտի ձեռք բերես. ալլապէս բոլոր ճախքդ եզուը է:

Հարցը դրուած էր Մելքոն աղալի համար վճռական կերպով: Նա մի-երկու վայրկեան մտածող աչքերով նայեց ճարտարապետի երեսին, ձեռը տարաւ լայն ճակատին ու ճաղատ գլխին ձայնեց, «պիտի աշխատեր...».

II

Երեկոյ էր։ Մեղմիկ զեփիւռը օրօրուելով անց կենաց քաղաքով՝ փարում էր ծառերի կատարները, մտնում էր բաց դռներն ու պատուհանները, ներս էր սողում տանիքները, գուրգուրում էր իրար հետ ընդգրկուած թը-փերն ու մացառները, շոլում էր վաստակաբեկ մարդկանց ճակատները, տատանում էր կանանց թել-թել կախ ընկած մազերը, խաղում էր մարդկանց վրալի ամառուալ թեթև զգեստների հետ իւր ալիքներով փռփռացնելով նրանց փեշերը. սողում, վաղում էր ամեն տեղ իւր հանգիստ բերող զովութիւնն ու թարմութիւնը տարածելու։

Ամառուալ անուշ մի երեկոյ էր։

Պատից քաշ արած լամպարի աղօտ լոյսի տակ նստած էր խարազ Աբելի ընտանիքը։ Լապտերի երերուն ճառագալթները հազիւ լուսաւորում էին խարիսուլ շինութեան ցածր պատերը, որոնք իրար հետ մէկ եղած կարծես ճիգ էին թափում պահելու իրենց վրայ կառուցած խարիսուլ ձեղունը։ Նեղլիկ լուսամուտից ներս էր հոսում օդը և պտույտներ կազմելով նորից ետ դառնում, երբեմն-երբեմն տատանելով լամպարի աղօտ երերուն բոցը։

Թաղթի վրալ նստած էր Աբելի ամուսինը՝ Ասլին եր երեք փոքրիկ զաւակներով։ Նրանք լուռ էին։ Կենդանութիւն տուողը մոխրագոյն կատուն էր, որ մէջքով քսուելով մանուկների մէկին, միւսին՝ մելամաղձոտ մըմըռոց էր արձակում և պոչով շոլում փոքրիկների ձեռքերըն ու դէմքերը։

Տնակի գուռը ճռաւը ճռաւը բացուեց և ներս մտաւ Աբելը։

Նրա գալը իրեն հետ կասես կենդանութիւն ներս քերեց։

—Հալրիկս, հալրիկս,— կանչեցին մանուկները և վեր թռան նստած տեղերից։ Այենից մեծը Աւօն վազ տուեց գէպի հալը, նրա ետևից Սաթիկը, իսկ ամենա-

փոքրը Լուսիկը թեերը պարզեց ու կանգնած տեղից կանչեց.

Հալրիկ, ինձի ալ, հալրիկ, ինձի:

— Նիմա, բալիկս, — ձայնեց հալրը.

Ասլին վեր կացաւ տեղից, ընդունեց ամ ուսնու ձեռից աղլուխի մէջ կապած ընթրեքի համար բերած մթերքը և դրեց դարակի վրար:

— Հալրիկ, հալրիկ, գլիչ:

— Հա: Հա, գառնուկս, Լուսիկս, Լուսս, — խօսեց հալրը և գրելով նրան պինդ հուպ տուեց դէմքին:

— Հալրիկս, հալրիկս, — ձայնեց Սաթիկը և թռաւ նրա գիրկը:

Իսկ Աւօն մնաց հօր ծնկան հետ կանգնած:

— Ասի, ջուր տուր քիչ լուացուեմ, զովանամ. ովկէհ, էսօր 6 զոլդ ոտնաման եմ կարել՝ հոգիս դուրս է եկել. օրը շնք, երկար. սաստիկ լօգնել եմ:

— Դէ, հալրիկին հիմի մի քիչ հանգիստ թողէք գայ լուացուի. իջէք գրկից, — խօսեց Ասլին և ջուրը տալով ամուսնուն՝ ինքը գնաց խոհանոց ընթրեք պատրաստելու:

Արէլը լուացուեց, սրբուեց, շորը փոխեց, էլի նստաւ իւր տեղը, երեխաները հաւաքեց չորս բոլորը:

Զեփիւռը շարունակ խաղում էր անակի շուրջը բոլորած ծառերի կատարների ու թփերի խմբերի հետ, շարունակ առաջացնելով մի ընդհատուող սօսափիւն: Օդը քանի գնում աւելի և աւելի զօրեղ և աղմկող էր դառնում,

Անհուն երջանկութիւն էր զգում խարազ Արէլը, որ օրուայ աշխատանքից լետոյ երեկոյեան հովին հանգիստ էր առնում հօրական տան մէջ, բոլորուած իր զաւակներով:

— Իմ բալաս, իմ սիրուն բալաս. Էս մալրիկդ քեզ նոր շնը է կարել:

— Հըմ, — ժպտաց Լուսիկը և ծռուելով դէպի Սաթիկը չարաճճի ժպիտով նայեց նրա երեսին:

—Մալրիկս ինձ համար էլ է կարել, այս, —աղմկեց Սաթիկը և վազ տուեց մօր սնդուկից իր նոր շրջազգեստը հանելու:

—Իմս էլ վաղը պատրաստ կինի, — գլուխը ետ ու առաջ առանելով խօսեց Աւոն, որ հօր ծնկից չէր հեռանալու:

—Հայ, հայ Վարդավառին բոլորդ էլ նոր կունենաք, — կրալ բերեց Ասլին, որ ներս մտաւ սեղան պատրաստելու:

— Հալրիկ, — կանչեց Սաթիկը, որ կիսով չափ հօր գիրկն էր բարձրացել:

— Ասա բալիկս:

—Մանչերը Վարդավառին շորերիս վրալ ջուր չեն ածի:

— Որ խելօք մնաք, ինչի՞ պիտի ածեն, — վրալ բերեց մալրը:

— Բա ես հերու խելօք էի, ապա ինչո՞ւ Մարանենց Սիրոն վրէս ջուր ածեց:

— Ու դու էլ վեր-վեր ընկար, — ծաղրեց Սաթիկը:

— Հայ, վեր-վեր ընկար, — կատակի տուեց հալրը:

— Ճատ սառն էր, հալրիկ ջան, «Պաղ Աղբիւրի» ջըրից էր:

— Ամծթ քեզ, հազար ամօթ, որ ուսումնարան գնալու տղալ ես՝ ջըրից վախենում ես, — կատակը շարունակեց հալրը:

Մանուկը ոտքը ոտքի ետևը տարաւ և ամաչելուց խուլ կերպով ժամտաց:

— Ամօթ թեզ, հազար ամօթ, — ջգրացրեց նրան Լուսիկը:

— Էստարի Վարդավառին մենք կերթանք «Պաղ Աղբիւր», — խօսեց հալրը, — հետներս կը տանենք հաց, ձու կանաչի, տանձ...

— Խնձոլ, — ձալնեց Լուսիկը:

— Սալնը, — վրալ բերեց Սաթիկը:

— Ասեղ, — աւելացրեց մալըը:

— Ասեղ... հա, հա, հա, — ծիծաղեց Աւօն. — ինչի՞:

— Որ ով շատ խօսի՝ նրա լեզուն ծակենք, — վրալ բերեց մալըը:

Մանուկները չարաճճի ժակիտով նալեցին իրար երեսի և լուռ ծիծաղեցին:

Սեղանն արդէն պատրաստ էր, նրանք բոլորուեցան նըտ շուրջը:

— Փառք Քեզ ՏԷր, Փառաց թագաւոր. գոհանամ շուքըիմ տուածիդ — պարգևածիդ Աստուած. կինս ժիր, երեխաններս կայտառ, ինքս առողջ. աէր եմ ու արժանի չեմ, — գոհունակութիւն լայտնեց Աբէլը, և խաչակնքելով երեսը ձեռը տարաւ բողբաշին:

III.

Երեկոյ էր: Սեղանի վրայի դրած հսկայ լամպարը եր լուսամփոփի պատերի միջով արձակում էր մեղմ կաթնագոլն լոյս:

Մելքոն աղան դարձեալ նստած էր իր սովորական տեղում, բազկաթոռին, երկու արմուկով յենուած ծնկներին՝ ճաղատ գլուխը շարժել էր առաջ, որի մսալի կատարը պսպղում էր լամպարի շեշտակի ճառագալթների դիմաց: Նա հատ-հատ դցում էր սև սալթ թազբէլի խոշոր հատերը, և շրթունքների արտնքով երկու կողմից դուրս էր թողնում ծխի սիւնեակները:

Մենեակի և Մելքոն աղալի լուռութիւնը խանգարեց քալերի փափուկ ձայնը: Նա գլուխը վեր բարձրացրեց և տեսաւ իւր դիմաց խարազ Աբէլին:

— Ա.ա, Աբէլ ջան, դու ես. եկա՞ր:

— Հրամանք ես. բարի իրիկուն:

— Բարով եկար: Հրամէ, նստի:

Աբէլը նստեց Մելքոն աղալի դիմաց և մտածեց. «անպատճառ էլի տանս համար կանչած կլինի, եթէ լի-

րաւի էլի դրա համար է, էլ էս անդամին ոչ մի բան խնալելու չեմ, ինչ բերանս գալ ասելու եմ»:

Մելքոն աղան դանդաղ ետ շրջուեց բազկաթոռի մէջին ու հարցրեց.

—Այսօր օրն ի՞նչ է:

—Հիգշաբթի:

—Ասել է վաղը ուրբաթ, միւս օրը շաբաթ, էս միւս օրը կիրակի Վարդավառ: Զէ:

—Հրամանք ես:

—Ասել է դեռ երկու օր կալ Վարդավառին:

—Ալո, —ձախեց Աբէլը և սպասեց, թէ ինչ էր լսելու Մելքոն աղայից:

—Աբէլ ջան, էս երկօրս մի ազատ օր չունի՞ս:

—Ինչ կալ որ,— անորոշ հարցրեց Աբէլը:

—Խանթի համար թթու ջուր է հարկաւոր, ոչ ոք չունեմ էնպէս մէկը, որ գնալ բերէ. կիրակի երիկունը հազար տեղից թթու ջուր են ուղելու, քանի օրէ ջուրը հատել է: Յոյս էլի դու ես, տեղի հետ ծանօթ ես. գիտես: Թէ կարաս վերցրու 2 ջորի, մի 200 հատ էլ շիշ գնալ բեր: Եշին $1\frac{1}{2}$ կոպէկ քեզ. խարջու էլ իմ վրաս:

Երեք ոռւբլիք. դա այնպիսի մի գումար էր Խարազ Աբէլի համար, էն էլ մի օրում, որ նրա համար կատարեալ մի գիտէր մի բազդաւորութիւն. ո՛վ գիտէ, քանի օր պիտի նստէր աշխատէր, որ կարողանար երեք ոռւբլի ձեռ բերել: Սաստիկ ուրախութիւնը պատեց նրան և նա մտքում խօսեց. «Վարդավառի ծախքս Աստուած ուղարկեց».

—Ուզում ես մի ընկեր հետդ վերցրու, —մեղմ նայուածքով ատամների արանքով հազիւ բաց թողեց Մելքոն աղան, որ լսողը կը կարծէր, թէ նա այդ ասում էր երեք ոռւբլին մի մարդու տալուն մեղքանալուն համար. մինչդեռ դրա հակառակն էր. նրան հարկաւոր էր, որ երեք ոռւբլին միայն Աբէլը առնէր և նա միանակ ջըի գնար:

— Ընկերն ինչ եմ անում. ինքս մենակ հերիք եմ.
— Լաւ, Ե՞րբ կդնաս, — այս անգամ բարձր և ուրախ
հարցրեց Մելքոն աղան:

— Վաղը ուրբաթ է, ձեռքիս գործերը վերջացնեմ
տէրերին տամ, որ գիմացի երկու օրը երար վրայ կիրակի
են, մուշտարիներս առանց ոտնամանի չմնան, շաբաթ ա-
ռաւոտ կերթամ. կիրակի ծէգին ալստեղ կլինեմ:

— Լաւ. շատ լաւ, — գոհ եղանակով ձախեց Մելքոն
աղան և աւելացրեց. — Ենպէս լինի, որ կիրակի առաւոտ
ջուրն էստեղ լինի:

— Աչքիս. վրայ, — խօսեց Աբէլը և վերկացաւ
գնալու:

— Սպասիր, ինչ ես շտապում. սպասիր մի պատառ
հաց ուտենք, — նրան նստելու ձեռքով նշան տրեց Մել-
քոն աղան. ապա շաղիկ ձեռը տարաւ սեղանի վրայի
վահանաձեւ զանգակին և հնչեցրեց. ու ներս մտնող ա-
ղախնին հարցրեց. —

— Մեղանը պատրաստ է:

— Հիմա կլինի, — պատասխանեց ձախի վրայ ներս
մտնող աղախինը և հեռացաւ:

— Ե՛՛է, հիմի Աբէլ ջան, հօ եղածն եղել անցել գը-
նացել է, ծուռը նստենք շիտակ խօսենք, — քիչ լոռ-
թիւնից լետոյ հառաչ քաշելով առաջ տարաւ Մելքոն
աղան:

« Զէ, ուրեմն սրա կանչելը էլի տան համար է եղել-
էտ ջուրը միմիայն պատճառ է», անցկացաւ Աբէլի
մտքով:

— Ինչէ էտ մի կտոր հողը չծախեցիր, որ էս քանի
տարի է ուզում եմ շինութիւն անել, մնացել եմ:

— Մելքոն աղալ, եթէ կարելի լինէր ծախել, միթէ-
քո խաթրդ կկոտրէի, կմերժէի:

— Ինչո՞ւ համար չէր կարելի:

— Նրա համար, որ հօրիցս ժառանգութիւն մնացած
տուն է, չեմ ուզում, որ ծախեմ: Ողորմած հէրս մեռնե-

լիս ասաց. «որդի՛, ես քեզ բացի էս մի աչք տանից ոչինչ չեմ թողնում, էտ էլ հօրիցս մնացած օջախ է. պահպանիր, ու դուէլ քու որդոցդ թող. սեպհական մի անկիւն ունենալը լաւ բան է»

Մելքոն աղայի դէմքը փալեց մի տարօրինակ ժպիտով. ալդ ժպիտը նենգութիւն էր, թէ բարկութիւն՝ դժուար էր որոշելը. սակայն երկում էր, որ այս ժպիտի մէջ մի գաղտնի, խորհրդաւոր բան կար. Դառաւ:

—Հէրդ շատ խելօք բան է ասել, ամեն մի հայր էլ իւր որդոցը միևնոյն բանն է անում: Բայց այդ չի նշանակում թէ անպատճառ տունդ այն ինչ կամ այսինչ տեղում պիտի ունենաս: Տուն ունեցի՛ր, ալդ միևնոյնն է, որտեղ ուզում է լինի:

Սբէլի սիրտը նրա ասածի հետ չգնաց, առւն ասելով նա սովոր էր լիշել այն տունը, որ հայրն էը թողել, և այն տեղը, ուր նա շինած էր. ուրիշ կերպ նա չէր կարողանում հասկանալ. խօսեց.

—Զէ աղալ, ուրիշ բան է հօրական տունը:

Մելքոն աղայի հասկացող հայեացքից ծածուկ չմնաց Սբէլի զգացածը. սակայն իբրև թէ ոչինչ չի հասկանում՝ շարունակեց.

—Ես քեզ համար կգտնէի մի ուրիշ ընդարձակ հող, կտայի բաւականին փող, որ գնալիր աւելի լաւը և աւելի ընդարձակը շինէիր: Սակայն չուզեցիր մի լաւութիւնանել, տունս թողիր շինելու:

—Ինչ անեմ աղայ ջան. ես մեղաւոր չեմ,—խեղճացած ձայնեց Սբէլը և ուսերը վեր թօթուեց, կասես ալդպիտով ուզենալով իւր վրայ բարդած մեղքը դէն ձգել:

—Լաւ բան չարիր... մենք այսքան տարուալ իրաբդրացի ենք, դեռ իրար հաւի «քշօ» չենք ասել. իրաբուլաւն ենք կամեցել... իսկ դու...

Մի ըոպէ Սբէլը մնաց լուռ, մտածելիս. նա մտաւ իւր գրացու գրութեան մէջ. սակայն ալդ ըոպէ երբ լիշեց հօր «պահպանիր» խօսքը՝ իր գրութիւնն աւելի զօրեղ կերպով պատկերացաւ նրան:

— Գուցէ հիմա միտքդ փոխել ես, հա, —նրա գէմքի բարի արտալալտութեանը նալելով սկըալիր հարցըց Մելքոն աղան:

— Աստուած չանէ, որ հօրս խօսքը գետին ձգեմ, — կտրուկ խօսեց Աբէլը:

— Գեղեցիկ. ասենք էդ լաւ ես ասում. ապա ի՞նչ ես անելու մի քանի ժամանակից, երբ տունդ թափուի. ինչո՞վ պիտի շինես,

— Աստուած ողորմած է. մէկ օր կհարստանամ, կքանդեմ կշնեմ:

— «Ի՞նչ... ա-ա-ա... դրան մտիկ արա... դեռ բաւական չէ, որ չի ծախում, այլ և ուզում մէկ օր էլ շինել... տանս առաջը կտրել... լաւ... կտեսնենք... շըրթունքները կրծոտելով քթի տակ մըմոաց Մելքոն աղան:

— Ընթրիքը պատրաստ է: համեցէ՛ր, — դուն միջից ձայնեց աղախինը:

IV

Վարդավառի առաւօտն էր: Սաղ քաղաքը ոտքի վրայ էր: Այն տեղ կենդանութիւն էր տիրում: Կարծես Շ... քաղաքացիները որոշել էին այդ տարի վարդավառն աւելի ուրախ անցկացնել: Վակ առաւօտից մարդիկ շարան շարան որոնք կառքով, որոնք ոտքով, որոնք ձիով գնում էին քաղաքից դուրս հով ալգիները, դալար պարտէզները օր անցկացնելու քէֆ անելու: Հեռուից լսում էր փողի ու թմբուկի ձայնը, որ վաղ առաւօտեան «սահարին» էր սկսել. թառի ու զութակի արձագանքը, որ «ճշղալիրն» էր նուագում. սրնդի երկար ու ձիգ հնչիւնները, որ «Առաւօտ լուսաբեր» էին երգում: Դրանց հետ խառնուել էին երգերի, խաղերի, պարերի և ուրախութեան աղաղակների ձայները, որոնք մերթ այս կողմից, մերթ այն կողմից արձագանք էին տալիս օդում: Երկում էր, որ մարդկանց սրտում կուտակուած ուրախութիւնը իւրընկեր վշտի հետ առիթ էր գտել դուրս թռչելու նրանց

կըծքերից։ Գեղեցիկ էր և սիւնեաց աշխարհի բնութիւնը։ իրաքանչիւր քերծ ու ժայռ, իրաքանչիւր խոտ ու արօտ, իրաքանչիւր ծառ ու ծաղիկ ալնտեղ ունին իրենց վալել։ շութիւնը։ Թուչունների ելգը, երկնքի կապուտակը, ծաղկած բուսականութեան անուշահոտութիւնը, բացուած վարդի տեսքը, խոխոջող առուակը կարկաչող աղբիւը.. ալդ բոլորը, բոլորը միասին թե առած կասես պարում էին իրար հետ։ Մարդը, բնութեան այս ազիզ արարածը զգում էր ալդ, օգտում և վալելշանում նրանով։

Խարազ Աբէլի ընտանիքն ևս պատրաստում էր գնալու, Ասլին առաւօտ վալ վերկացած օրուայ պաշարն էր խուրջինում տեղաւորում, տղայոց երեսները լուանում, նրանց շորերը հագցնում, ինքը կոկում-զուգում, որ «Պաղ-Ազրիւը» գնային, սպասում էին Աբէլին, սակայն արևն արդէն ծագել էր, Աբէլը դեռ չէր երեսում։

—Դէ՛, Աւո ջան, դու էս աղլուխը բռնիր տար պատգամը, ես մինչև խուրջինը դուրս կըերեմ. նստի՛ր, զգուշ, մէջը ձուեր են. վալը չձգես, չկոտրես։

—Մալլիկ, ինծո՞լը. ո՞ւլ է։

—Ալստեղ է, զամբիւղի մէջ է, բալիկս։

—Մալլիկ, հալրիկը դեռ շատ է ուշանալու։

—Զէ, հիմի կգալ. քիչ էլ սպասենք, —Մաթիկին պատասխանեց մալրը. և երեխաների հետ դուրս գալով դէպի պատշգամբ՝ նստեց ալնտեղ Աբէլի ճամբան սպասելով։ Բայց ուշանում էր Աբէլը. Արևն արդէն մի նիզակի բոյ վեր էր բարձրացել, Աբէլը դեռ չէր երեսում։

—Եդ մարդն ինչի՞ էդքան ուշացաւ. Բոլոր քաղաք արդէն դատարկուեց. լաւ տեղերը բռնեցին։ Իսկ նա դեռ չկալ։

Ալդ ասելու հետ կասես Ասլու սիրութ արորուեց. կասես դարդը այն չլինէր, որ դրացիներն առաջ գնացին, լաւ տեղերը բռնեցին, ալլ այն, որ Աբէլը չէր երեսում։ Ալդ բոպէ նրա աչքին ընկաւ դրացու որդին. կանչեց։

—Միքէլ, ա Միքէլ։

—Ասա՞ ազի:

—Քը մտաղ, մի գնաս Մելքոն աղունց տուն, իմանաս, թէ Արէլէն ինչ խարար ունեն:

—Ի՞նչպէս հարցնեմ,—կանդ առնելով հարցընց Միքէլը:

—Ասա՞ որ Արէլին որ խրկել էիք Թթու ջուրը, դեռ չէ եկել:

—Լայ, —ձայնեց պատանին և թռաւ:

Ասլին մնաց իւր ձագերով նստած պատշգամբում, և յիւնոյն միտքն էր որոճում, «ինչի՞ ուշացաւ». և ալդ միտքը քանի գնում աւելի և աւելի ծանր էր դառնում նրա համար և անմարսելի: Նրա մտածմունքները քանի գնում բարդում էին, ուռճանում և սև գոյն կրում: Ալդ անորոշ թափիծը հետզետէ քողաւորում էր մանկամարդ կնոջ սիրտը և ծածկում վշտի շղարշով, որը հետզետէ ստուարանում էր և հաստատուն դառնում: Նրա սիրտը ինչ որ անախորժ բան էր նախազգում. „Ցէր Աստուած, սա ինչ բան է. արար աշխարհքը ալսօր ուրախանում է, իսկ ես...”

—Լայ, —յանկարծ ճշաց նա և անզգայօրէն ձեռով խփեց ծնկանը:

—Ի՞նչ եղաւ քեզ մալրիկ, —իրար հետ հարցընց Աւոն ու Սալթիկը:

—Ոչինչ, էնպէս, —մանուկներին հանգստացրեց Ասլին և լիշեց գիշերուալ երազը, որ իրենք պտրտիզում մի թառլան զուշ ունէին՝ լժռաւ ծառի վրայէն գնաց... Ալդ երազը վարկենաբար վերալիշուեց նրա ուղեղում, բայց տպաւորութիւնը չանհետացաւ: Գիտակցութիւնը նրա մրտի անորոշ տիսրութեան հետ զոլդ դարձած աւելի ծանրացաւ նրա մանկատի սրտի վրայ:

Ալդ ժամանակ առաջ քալլելով երևաց Միքէլը.

—Ասում են «մենք էլ չգիտենք. զորու մէկն եկել է բեռնով, միւս ջորին ու ինքը չեն երևում»:

—Չեն երևում, —ձայնեց Ասլին և մնաց քարացած.

Նրա ուղեղը վալրկենաբար կանգ առաւ մտածելուց, սիրտն սկսեց սաստիկ բաբախել ու լեզուն համրացաւ բերանում:

—Ասում են, որ մարդ են խրկել ետևից, —իւր խաբարը վերջացրեց Միքէլը:

Ասլին մնաց նոյն դրութեան մէջ, նրա լացը կամաց կամաց սկսեց գալ, կոկորդը ճնշւում էր, սակայն նա չուզենալով երեխաների սիրտը կսկծացնել զսպում էր իր արտասուբրը:

Մանուկներն զգալով մօր թախիծը, նրա ծնկների հետ շարուած արձանացած կեցել էին և չգիտէին ի՞նչ տուին:

Ալդ ըոպէ քաղաքի չափառն երևաց և մօտենալով Ասլուն հարցրեց.

—Խարազ Աբէլի տունը սա է:

—Հրամանք ես, աղալ, Աբէլը ինքը տանը չէ. ինչի համար ես հարցնում:

—Ինչի համար, —ակամալ կրկնեց չափառը և երեսր շըշեց գէպի փողոցի միւս կողմը:

Ալդ ժամանակ երկու մարդ շալակած բերում էին մի արնաքամ դիակ:

Ասլին ճանաչեց ալդ դիակը.

—Վաշ մալրիկ ջան, ի՞նչ եմ տեսնում, —սաստիկ ճիչ արձակեց նա և ընկաւ ամուսնու սառած դիակի վրայ:

V

Մի տարի, յետոյ Մելքոն աղալի առւնը շինուած էր:
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԻԱՍԵԱՆ
